

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԺՈՂՈՎԻ

15 փետրվարի 2011թ.
գ. Խաչիկ

Վայոց Ձորի մարզի Խաչիկի համայնքի ընդհանուր ժողովը կայացավ 2011թ-ի փետրվարի 15-ին Խաչիկ համայնքի մշակույթի տան դահլիճում:

Ժողովին ներկա էին համայնքի 80 չափահաս անդամներ:

Ժողովը վարում էր Խաչիկի համայնքի ղեկավար Վարդան Ներսիսյանը:

Օրակարգը՝

Խաչիկի համայնքի ղեկավարի 2010 թվականի աշխատանքների հաշվետվություն:
զեկ, համայնքի ղեկավար՝ Վ. Ներսիսյան

Համայնքի ղեկավարը ողջունելով մասնակիցներին ներկայացրեց ժողովի օրակարգը: Եղավ առաջարկություն ժողովը սկսելու վերաբերյալ: Համայնքի ղեկավարը հանդես եկավ հաշվետու զեկուցումով՝

Ա. 2010 թվականի ընթացքում կատարած աշխատանքների մասին

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2010թ-ի ձմռան ամիսներին իրականացվել է ճանապարհների մաքրման

աշխատանքներ որի վրա ընդհանուր հաշվով ծախսվել է 60լ դիզ վառելիք:

Իրականացվել է հանդամիջյան ճանապարհների մաքրում շուրջ 50կմ

երկարությամբ, կատարվել է 300լ դիզ վառելիքի ծախս: Հեղեղներից քանդված

հատվածներում կատարվել է հանդ գնացող ճանապարհների փոսալցում:

Երկար տարիներից հետո փորձել ենք կարգի բերել Խաղողի այգիների մեջ ընկած

ճանապարհները: Այգետերերի մեծ մասը քանդում են ճանապարհները՝ առուներ հանելով, չնախատեսված տեղերում և ջուրը տանելով ճանապարհների միջով:

Ճանապարհների մեծ մասը այնքան է նեղացել, որ այն կարգի բերելու ժամանակ

կվնասվեն խաղողի վազերը, ինչը ինքնին անցանկալի երևույթ է: Այգետերերից

պահանջվում է ճիշտ օգտագործել ճանապարհներն ու առուները:

Կատարվել նաև գյուղամիջյան փողոցների փոսալցման աշխատանքներ

բարեկարգվել են. 6րդ- և 7րդ փողոցները:

. Իրականացվել է գյուղապետարանի երկու սենյակների և միջանցքի վերանորոգումը:

Խաղահրապարակում կառուցվել են տաղավարներ և կազմակերպվել է

երիտասարդների և երեխաների ակտիվ հանգիստը: Տեղադրվել է կինոէկրան և երեկոյան ժամերին ցուցադրվել են կինոնկարներ:

Մշակույթի տան դահլիճի համար ձեռք ենք բերել նստարաններ, որոնք

առաջիկայում կվերանորոգվեն մեր միջոցներով և կտեղադրվեն դահլիճում:

Ամռան ամիսների ընթացքում երկու անգամ կարողացել ենք կազմակերպել ներկայացում՝ մեր երիտասարդների ուժերով և հրավիրել ենք տիկնիկային

թատերական խումբ՝ գյուղապետարանի միջոցներով:

<ՎիվաՄեյլի> աշխատակիցների անձնական միջոցների ներդրմամբ վերանորոգել և

կահավորվել են Խաչիկի դպրոցի երկու սենյակներ, որտեղ անց են կացվում

նախադպրոցական խմբի երեխաների պարապմունքները:

<Ապավեն Համայնքներին> կազմակերպության միջոցներով կատարվել է սելավատարի մաքրման և վերականգնման աշխատանքներ:

Խմելու ջրի ներքին ցանցում փոխվել է 150մ. երկարությամբ ջրատար

խողովակ, որի արդյունքում լուծվել է մեկ թաղամասի բավարար ջրամատակարարման հարցը:

Երկար բանակցություններից հետո ձեռք բերվեց համաձայնություն և լուծվեց. <Միջազգային Հաբիթաթ> կազմակերպության կողմից տրամադրված վարկերի մուծումները, <Հայփոստի> Խաչիկի բաժանմունքում կատարելու օրախնդիր դարձած հարցը: Մեկ մուծում կատարելու համար այլևս անհրաժեշտ չէ գնալ Եղեգնաձոր, կատարել երկու հազար դրամի ծախս և կորցնել մեկ օր:

Տարվա ընթացքում գյուղի վարչական տարածքում առաջացել են նոր աշխատատեղեր և մեր ջանքերի արդյունքում ձեռք է բերվել համաձայնություն՝ այդ տեղերում աշխատանքի ընդունել միայն Խաչիկի երիտասարդներին: Այսօր կապի դասակում պայմանագրային զին. ծառայության են անցել չորս երիտասարդ տղաներ, ևս 10 երիտասարդներ նախապատրաստվում են ընդունվել աշխատանքի: Ունենք նաև շուրջ 50 պայմանագրային զինծառայողներ:

Գյուղատնտեսության աջակցության ոլորտում կարողացել ենք կազմակերպել ազոտական պարարտանյութի ներկրում և մկնդեղի տրամադրման աշխատանքներ:

Էլեկտրական մատակարարման մեջ կան բազմաթիվ խնդիրներ: Երկար բողոքներից հետո փոխվեցին երկու հենասյուներ, սակայն մի ամբողջ թաղամասում հոսանքի լարումը մնում է նորմայից շատ ցածր: Իրականացվում են նախագծային աշխատանքներ՝ նոր թաղամասի տները էլեկտրաֆիկացնելու ուղղությամբ: . Կարկուտի վնասների մասին. - անցած տարի տեղացած կարկուտը ոչնչացրեց շուրջ 50 հա ցանքատարածություն: Մեր պահանջով մարզպետարանից եկավ հանձնախումբ, որը ուսումնասիրեց վնասը և կազմվեց 7,5 մլ. վնասի ակտ:

Փաստերը սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ կառավարություն, սակայն փոխհատուցում չի տրվել:

Ուժեղ քամուց վնասվեցին շատ շենքերի տանիքներ, և , հատկապես , տուժեց Գագիկ Առաքելյանի նորակառույց տունը, որի տանիքը ամբողջությամբ դեն էր նետվել:

Կազմվեց համապատասխան ակտ, արտակարգ իրավիճակների աշխատակիցների մասնակցությամբ և ներկայացվեց ՀՀ կառավարությանը: Սակայն ստացանք մերժողական պատասխան: Դիմեցինք <Վիվա Սելլ> ընկերության տնօրեն պարոն Ռ. Յիրիկյանին, որն էլ տրամադրեց գումար՝ Գագիկ Առաքելյանին հասցված վնասը վերականգնելու համար:

Օրագրեր, որոնք իրականացման ընթացքի մեջ են

ՀՀ նախագահ պարոն Մերժ Սարգսյանի անմիջական հանձնարարությամբ 2011 թվականին Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամի կողմից իրականացվելու է Խաչիկի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման ծրագիրը՝ 130 մլն դրամ ընդհանուր արժողությամբ; Այդ շինարարության վրա կաշխատեն մեր համայնքի 20-30 աշխատողներ: Հույս ունենք, որ մեր երեխաները վերջապապես կունենան հարմարավետ և տաք դասասենյակներ:

Նախատեսվում է նաև դպրոցի մասնաշենքում կազմակերպել նախադպրոցական տարիքի երեխաների մարկապարտեզ: Մանկապարտեզի կազմակերպումը իրականացվելու ՀՀ կառավարության պահանջով, և աշխատելու է արդեն 2011թվականի սեպտեմբեր ամսից:

ՀՄՀ ծրագրով նախատեսվում է 3-րդ կարգի ջրանցքների վերանորոգում, որի համար համայնքի կողմից ներդրումները կատարվում է համայնքի բյուջեից: Օրագրի արդյունքում կփոխարինվեն արդեն մաշված կիսախողովակները, և կկանխվեն ոռոգման ջրի մեծ չափերի հասնող կորուստները:

. Նախատեսվում է համայնքում իրականացնել <Վարձատրվող հասարակական աշխատանքների> ծրագիր, որի շնորհիվ կբարեկարգվեն փողոցներն ու ճանապարհները, շուրջ 20 բնակիչներ կունենան ժամանակավոր աշխատանք:

Խմելու ջրի ներքին ցանցը շահագործման է հանձնվել լուրջ թերություններով, ինչի հետևանքով ջրի բաշխումը կատարվում է անհամաչափ, և տեղիք է տրվում բնակիչների բազմաթիվ բողոքների: Նախատեսում ենք բյուջեի միջոցներով վերակառուցել ջրի բաժանարարները, այնպես , որ հավասարաչափ բաշխումը իրականանա ավտոմատ ձևով:

. Ձեռք ենք բերել համաձայնություն կաթ մթերող ա/ձ-ի հետ Խաչիկում կաթի մթերում կազմակերպելու համար:

ԾՐԱԳՐԵՐ, ՈՐՈՆՔ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ ԵՆ

. Բնակարանաշինությունը շարունակում է մնալ մեր համայնքի հիմնախնդիրը: Մենք այդ հիմնախնդրի հետ ենք կապում գյուղի հետագա գոյությունը` որպես բնակատեղի: Անցյալ դարի առաջին կեսին կառուցված 180 կավից տները վաղուց արդեն 3-4 աստիճանի վթարային տներ են և նրանց վերականգնումը անիմաստ է: Գյուղում ապագա տեսնելու համար անհրաժեշտ է իրականացնել բնակարանաշինության ծրագիր: Հակառակ դեպքում արտագաղթը ընդունելու է անկառավարելի չափեր: Այդ հարցը մենք այս կտրվածքով էլ ներկայացնում ենք ՀՀ կառավարությանը և ՀՀ նախագահի աշխատակազմին:

. Նախատեսվում է IFAD միջազգային կազմակերպության հետ իրականացնել շուրջ 50 հա տնկարանների հիմնում ժամանակակից տեխնոլոգիաներով: Այն թույլ կտա ստեղծել կայուն եկամուտների երաշխիք, կիրականացվի ոռոգման ջրի արդյունավետ կառավարում, կլուծվի արտադրանքի իրացման և պահպանման խնդիր, դրան զուգահեռ կբարելավվեն այլ կոմունիկացիաներ:

Նախատեսվում է <Կաղ Առվի> նոր ջրագծի կառուցում, ինչը թույլ կտա ձնհալի ջրերը ամբողջությամբ հասցնել գյուղի տարածք:

Նախատեսվում է նաև Չրախանի ջրի ավելացման ուսումնասիրություն և ,եթե պարզվի, որ կա հնարավորություն ապա կկառուցենք օժանդակ ջրագիծ և կմիացնենք ընդհանուր ջրագծին:

Մեր ունեցած ջրավազանի մաքրմամբ և ոռոգման ցանցի վերանորոգմամբ մտադիր ենք բարելավել ոռոգման ջրի մատակարարումը:

Նախատեսվում է նաև իրականացնել խմելու ջրի ակունքների վերանորոգման աշխատանքներ, ինչի շնորհիվ կապահովվի խմելու ջրի անհրաժեշտ որակը:

Կարծես թե արդեն անհրաժեշտություն և պահանջ է դարձել Քարակոփի ճանապարհի փոխարինումը ավելի հարմար ճանապարհով:

Նախատեսվում է նաև Գերեզմանատան տարածքի ցանկապատի վերանորոգում, և տարածքի բարելավում:

Գյուղամիջյան Սուրբ Աստվածածին եկեցեցու վերանորոգման համար կան բավական լուրջ և հավաստի տեղեկություններ, հուսով ենք, որ այս ծրագիրը ևս կաշխատի:

Մտադիր ենք շարունակել բանակցությունները գյուղնախարարության հետ` Խաչիկում անասնապահական ծրագրեր իրականացնելու համար:

Զեկույցից հետո ժողովականների կողմից տրվեցին հարցեր և արտահայտվեցին համայնքի որոշ բնակիչներ՝

Պերճ Պողոսյանը- Ջրամբարի տարողության վերաբերյալ սասց, որ այդքան մեծ ծավալ մեզ անհրաժեշտ չէ. կարելի է ունենալ 300000լիսմ.

Պատասխանվեց, որ նախնական վիճակով հենց այդքան էլ մենք ներկայացրել էինք սակայն մասնագետները տնտեսապես արդարացված և շահավետ են համարում 500000-ից ավել տարողությամբ ջրամբարները և մեր ունեցած տարածքը այդ հնարավորությունն ունի:

Գագիկ Պողոսյանը դժգոհություն հայտնեց գյուղատնտեսության ոլորտում կատարվող աշխատանքների կապակցությամբ:

Մարտիրոս Պողոսյանը խոսեց խմելու ջրի իրենց թաղի ջրագծի մի հատվածի փոխարինման մասին:

Գուգեն Բադայանը խոսեց Չրախանից եկող ոռոգման ջրի քանակի ավելացման մասին:

Անուշավան Մանուկյանը խոսեց գյուղատնտեսության բնագավառում նշանակալի ներդրումներ կատարելու նոր տեխնիկա ձեռք բերելու անհրաժեշտության մասին:

Համայնքի ղեկավարը անդրադարձավ բարձրացված հարցերին, տվեց պարզաբանումներ և ներկայացրեց տվյալ ոլորտին վերաբերվող խնդիրների լուծման վերաբերյալ նկատառումներն ու նախատեսվող ծրագրերը:

Եղավ առաջարկություն սահմանափակել հարցերը և մեկ տարվա կատարած աշխատանքների մասին համայնքի ղեկավարի հաշվետվությունը համարել բավարար:

Ժողովը որոշեց:

1. Խաչիկի համայնքի ղեկավարի 2010թ -ի կատարված աշխատանքները համարել բավարար :

Օրակարգի սպառմամբ ժողովն ավարտվեց:

Արձանագրությունը
կազմեց աշխատակազմի
քարտուղար՝ Վ. Սարգսյանը

ԽԱԶԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ